

ԱՆՄԱՀ ՄԱՐԴՔ

(Գրերի դիւտի 1500-ամեայ յօբելեանի առիթով)

Դա այն մարդն էր, որ ծնվել էր ոչ միայն մարդ լինելու, այլ լուսոյ մի կանթեղ, որի լոյսը պիտի տարածվէր և սփռվէր ամբողջ երկրագնդի երեսին, ուր ապրում է հայ մարդը: Նա ծնվեց սոսկ մարդ, բայց զարձաւ կարապետն այն մեծ յեղաշրջման, որ մարդ ապրելու է ոչ միայն իր, այլ և ուրիշների համար: Ժամանակն ու իր պարագաները դարձրին նրան ամենից գերազոյնը, որ եկաւ ընդմիշտ ծառայելու մի ազգութեան, որի հարազատ զաւակն էր: Նա ըմբռնեց իր ժամանակի ոգին ու մտածեց այդ մասին, որի արգասիքն եղաւ գերը:

Դառնանք ուսկեղարի սկիզբը: Մի մարդ է միայն ամբողջ հոգսերի մտածողը ասիական խաւար ու դժնղակ իրականութեան, ուրը կորցրած իրական մետաղեայ զէնքը՝ կարօտ էր մտքի զէնքի, կուելու յունաց և պարսից ազգագործական ընթացքի դէմ: Նա յանձն առաւ կրել այն բոլոր Փիզիքական ու հոգիկան զրկանքները, թէ ինչ է՝ մի ազգի զոյութեան ու լուսաւորութեան հիմն դնէ, որքան որ կողեն փոթորիկներն ու ամպրոպները կուտակվեն նրա գլխին: Դեռ մի դար էր անցել միայն այն օրից, երբ քրիստոնէութիւնը ճանաչվել էր պետական կրօն: Այս ժամանակ էր, որ ազգի ցաւերով տարված մէկը՝ թողած վարչական պաշտօնը՝ ընդունում է կուսակրօնութիւն: Դա երջանկայիշատակ ու մեծ ուսուցիչ բովանդակ Հայաստանի՝ անմահ Մեսրոպն էր:

Մանելով հոգեսորական սքեմի առակ, նրան տեսնում ենք անխոնջ մշակի դերում, քարոզչական ցուպը ձեռքին հայ ժողովրդի մէջ: Նա տեսնում էր բազմատանջ ժողովը ցաւերն ու հոգսերը, թէ ինչպէս խեղճ ու տառապած, տգէտ ու հալածված, կեղեքված ու հիւծված՝ արտաքին ու ներքին թշնամիներից՝ հայ ժողովուրդը տնքում է ու այլասերվում օտարի ճնշման ներքոյ: Եւ ահա այս պարագաներում Մեսրոպի միտքը լզանում է, թէ անհրաժեշտ է սեփական գիր ստեղծել և միանգամայն վերջ դնել արս անտանելի կացութեան. և որ ամենից էականն է՝ մի ազգի հիմնաքարը դնել ընդ միշտ ու լուսաւորութեան ճանապարհը բանալ, որ այդ ժամանակ Յունաստանում հասել էր իր ծագկման գագաթնակէտին, որից զուրկ էր հայ ազգը: Այս իսկ մտքով Մաշտոց-Մեսրոպ սկսում է անդուլ աշխատանք, և վերջապէս նրա ջանքերը պսակվում են:

Մեսրոպ հոգու անհուն թափով ու եռանդով սկսում է դպրոցներ բանալ ս. Սահակի և թագաւորի աջակցութեամբ: Նա հարեւանների կողմից հանդիպում է խոչընդուների, բայց որպէս անյաղթելի՝ իր ուժեղ կամքով անցնում է առաջ: Անցնում են դարեր, և ահա տեսնում ենք, թէ ինչպէս գրագիտութիւնը տարածվելով մինչև մեր օրերը ահագին յեղաշրջում է առաջ բերել: Տեսնում ենք այժմ, թէ ինչպէս ազգը ուրախ է մի հատիկ մեծ ու անմահ մարդով: Հայ ազգը այսօր երախտահատոյց լինելու համար տօնում է նրա զերազոյն մտքի արգասիքի 1500-ամեայ յօբելեանը մի այլ սոյնքան նշանակալից ֆակտօրի՝ հայ տպագրութեան 400-ամեայ յօբելեանի հետո:

Անմահ Մեսրոպը մէկն էր ամենքի համար,

որ ապրեց, գործեց և թողեց անմահ յիշատակ:

Գ. Տէր-Յովհաննիսեան

Դիլիջան